Վերջապէս, կրկին խնդրում եմ ժամ առաջ ձեր զօրամասերը յետ քաշել և հիմնուելով մեր երկուսի միջև գոյութիւն ունեցող փաստական և իրաւական տեսակէտով գործադրութեան մէջ եղող Բաթումի դաշնագրին՝ բողոքում եմ կատարուած շարժումների դէմ և պատասխանատու եմ դնում մուսուլման ազգաբնակութեան կրած վնասներին պատճառ եղողներին:

Սպասելով մեր փոխադարձ շահերին համապատասխանող մի պատասխանի՝ խնդրում եմ ընդունէք իմ յարգանացս հաւաստիքը, էֆէնդիմ:

Թիւրք Մեծ Ազգային Ժողովի Արտաքին
Գործերի կոմիսար Բէքիր Սամի.

Սոյն հեռագիրը իսկականի հետ ճիշտ է.

Կնիք 11-րդ զօրաբանակի և ստորագրութիւն.

Սարիղամիշ. Գնդապետ Միրիմանեանին. Խնդրում եմ սոյն հեռագիրը ուղարկել օսմանեան տասնևհինգերորդ զօրաբանակի հրամանատար Կարաբեքիր փաշայի միջոցով հետևեալ հասցէին.

«Անգորա. Թիւրք Ազգային Մեծ Ժողովի Արտաքին գործերի վէքիլ մեծ. Բէքիր Սամիին.

Առանց չշոշափելու հարցի բնականոն կողմը այն տեսակէտից, որ Բրէստ-Լիտովսկի և Բաթումի դաշնագրերը կնքուած են սուլթանի կառավարութեան կողմից, որը ձեր կառավարութիւնը չի ճանաչում, պատիւ ունեմ պատասխանելու ձեր 8 յուլիս 36 թ. գրութեան:

Ինչպէս Բրէստ-Լիտովսկի դաշնագիրը, որի մէջ Հայաստանը ոչ մի մասնակցութիւն չէ ունեցած և ոչ էլ ստորագրած է, նմանապէս Բաթումի դաշնագիրը, որը երկու կողմերի պարլամենտներից չէ հաստատուած, ո՛չ մի իրաւական ոյժ չեն կարող ունենալ Հայաստանի համար:

Այն հանգամանքը, որ Դուք իբր հիմք էք ընդունում Բրէստ-Լիտովսկի և Բաթումի դաշնագրերը, որոնք հիմնովին չեն ճանաչում կենսունակ Հայաստանի գոյութիւնը, ի մեծ ցաւ զրկում է մեզ Ձեզ հետ համաձայնութեան գալու ամէն յոյսից, քանի դուք շարունակէք ղեկավարուել գերման կայսերական և սուլթանական իմպէրիալիստական, հակայեղափոխական կառավարութեան ձգտումների վրա հիմնուած այդ դաշնագրերի տրամադրութիւններով, որոնք ժխտում են կառավարութեան և միջազգային յարաբերութիւնների մէջ ազգերի ինքնորոշման, իրաւունքի և արդարութեան սկզբունքները:

Անկեղծաբար ձգտելով ստեղծել բարի հարևանական յարաբերութիւններ Թիւրք և միւս ազգերի հետ, հայ ազգը այդ յարաբերութիւնների իրական հիմք և անհրաժեշտ նախապայման է համարում, որ երկու կողմերն էլ ճանաչեն շահագրգռուած ազգերի պատմական, ազգագրական ու տնտեսական իրաւունքները:

Ցենուած իւրաքանչիւր ազգի այս օրինաւոր իրաւունքների վրա՝ հայ ազգը, բնականաբար, չի կարող հրաժարուել Տաճկաստանի հայկական նահանգների վրա ունեցած իր անվիճելի իրաւունքներից, որոնց սահմանները, համաձայն դաշնակից պետութեանց կողմից այժմս Տաճկաստանին յանձնուած հաշտութեան դաշնագրի, պիտի որոշուեն գերագոյն իրաւախոհի՝ Ամերիկայի Միացեալ Նահանգների Նախագահի կողմից:

Ցիշեալ դաշնագիրը ստորագրող Հայաստանը մտադիր է ճշտօրէն հաւատարիմ մնալ գերագոյն հաշտարարի որոշման, սպասելով դրան՝ նա